





չորրորդ մասը կ'կազմէ ամբողջական

հայաստանին զոր մենք պահանջած ենք:

Ի՞նչպէս ենթադրուի որ երկրի մը հազիւ մէկ չորրորդ մասին ըմտու-

թիւններով կարելի ըլլայ կազմել խորհրդարանային պարապետութիւն:

Իրաւ է որ Արարատեան Հանրապետութիւնը սկիզբը շատ պզտիկ էր:

Բայց քանի որ թրքահայաստանի միացման ճրագիրը Պարապետութեան Համաձայնագրին ներկայացուած էր:

Սակայն քանի որ թրքահայաստանի միացման ճրագիրը Պարապետութեան Համաձայնագրին ներկայացուած էր:

Սակայն քանի որ թրքահայաստանի միացման ճրագիրը Պարապետութեան Համաձայնագրին ներկայացուած էր:

### ՅՈՒՇԱՏԵՏՐԵՍ ՀԱՅ ԻՇԻՆ ՎՐԷԺԸ

Իրիկումուտ է: Տարագրութեան նոր վերագրածն ընկերով մը հետ մեկուսի կը ճեմենք քարափին վրայ:

Վա, պատմէիր ինձ գոնէ հէքեաթ մ'աղոտոր արևի:

Կը հառաչեմ յանկարծ վշտին թեմին սակ ընկճուած:

Հէքեաթ մը կուզես աղուոր արևի, ա՛հ, չե՞ս դիտեր որ մեր արևն ներք բոլոր կարմիր են ներկուեր:

Քանի մը վայրկեանի լուռութիւն մը վերջ

Գտայ, գտեց, երբ քովէն կ'անցնէին հայ գեղուհիներու խումբ մը, այս անհոգ արարածները զէպ մը լի- շեցուցին ինձ: Ու սկսաւ պատմել:

«916 ի ամրան էր. կ'անցնէինք Գ. քիզէն քանակին և սպայակոյտին հետ միասին, երթալու համար Կովկասի ռազմածախարու թուրք սպայ լակեր- ներէս մէկ քանին հրաւիրեցին զիս մասնակցելու խնէջ խնջոյքի մը: Հա- մակերպեցայ իրենց հաճոյալի ըլլալու համար: Առաջնորդեցին զիս այն սու- նը ուր չքնաղ գեղուհի մը մեծ հաճո- յակատարութեամբ մը զմեզ պիտի զու- արձայնէր: Թրքական սովորութեան համեմատ կերանք խմեցինք, պոռա- ցինք: Տարաբանի կ'երգէր ու կը պա- ըրէր և իր գզուանքները կը շոտայէր ամենուէն, սակայն խիտ աչքառու էր ինձմէ հեռու մնալու իր զգուշա- լորութիւնը: Բայց այս ընթացքը ինձի վրդովմունք պատճառելէ խիտ հեռի, քոհ ապաւորութեան մը տակ պարզ

հանդիսատեսի գիրքին մէջ կը թողար: իրք կը պատրաստուէինք մեկիւր, տարփուհին ձեռքի նշանով մը հրաւի- րեց զիս որ իրեն հետևանք ներք սե- նակին մէջ առանձնացանք:

Գիտեմ որ Հայ էք և կը մտա- ծեմ որ գուցէ իմ ընթացքս ձեզի վերջա պատճառամ ըլլալու է: ուստի կ'ուզեմ լուծարանել ձեզ:

Սառնց ալլալայի ուրացայ Հայ ըլլալս, որովհետեւ իբր թուրք միայն այդ կողմերը կ'ընայի ապրել, և տար- փուհիին յայտնութիւնը դաւազու- թեան մը սկիզբը նկատեցի: Բոլոր ու- ժովս ուրացայ և բողոքեցի:

Հոգ չէ, ուրացի՛ր, այդպէս պետք է ընես որ հոգիդ փրկես, լաւ գիտցիր որ տեղեկացած եմ քու ինքնութեանդ, սակայն մի վախար, ես ալ քեզի պէս Հայ եմ: խիտ հարուստ և պատուա- լոր ընտանիքէ մնացող միակ աղջիկը: Գլուխս պայթեցնելու չափ խորհեցայ կերպով մը լուծելու համար վրէժս որ կ'այրէք սիրտս, կը խոնկէր հոգիս: Եւ վերջապէս գտայ այս միջոցը: Տե՛ս, Ե- սաւ կուրծքը բանալով և ցոյց տալով շարանաւ վէրքեր, ինքզինքս վարա- կեցի արտերուն ամենէն սոսկալիովը և նոյն ախտով կը վարակեմ հոսկէ անցնող բոլոր գահիճները մեր ցեղին: Գեղեցկութիւնէս հրապուրուած ոչխար- ներու հեղութեամբ կարգաւ կ'իյնան որոգայթի մէջ և ումպ ումպ կը խը- մին վրիժաբոյր թոյնը զոր ես արիւնիս մէջ կը պահեմ. կը խմեն ու կը մեկ- նին այս տեղէն մահը տանելով իրենց հետ:

Այսպէս պիտի շարունակեմ իմ պարտականութիւնս մինչև որ մահը փակէ աչքերս իմ խաղաղած հոգւոյս վրայ: Աստուած նոյնիսկ ինձի չափ չե՛մ յուսար որ երջանիկ ըլլայ, նա մանուանդ անոր՝ համար, որ ունիմ կարգ մը միջոցներ ճանչնալու համար ամեն անոնք որ իմ ցեղիս հարազատ զաւակներն են և քեզի պէս զանոնք անվտանգ դուրս հանելու այս սեմէնս:

Սարապիի, զայրոյթի, հիացումի և պաշտամունքի յաջորդական զգացում- ներու հեղեղներէն արբելու կ'ուզէր ինչ- էի, մինչ «հիշատուս հայուհին» ձեռ- քէս բռնած, անպարզիճ ժպիտ մը շրթներուն կ'աւաղողէր զիս զէպի գուռը և ճամբու կը դնէր սկունջիս փսփոսով:

Գնա՛, ով եղբայր, ով պաշտելի զա- լակը անմահ ցեղիս, գնա՛, յիշէ՛ զիս և մի մոռնար պարտականութիւնդ:»

Ընկերս հազիւ աւարտած էր իր պատմութիւնը երբ քարափին վրայ Հայ գեղուհիներու խումբը, թիթեա- նիկներու պէս թեթեալ ու անհոգ, թե ի թե, թեքելով, թեքտելով անցան մեր քովէն:

Գնա՛, ով եղբայր, ով պաշտելի զա- լակը անմահ ցեղիս, գնա՛, յիշէ՛ զիս և մի մոռնար պարտականութիւնդ:»

S. ԹՈՐՊՈՐ

### ՄՈՒՇԻ ԽԱՍ ԳԻՂԵՆ ԱԶԱՏՈՒԱԾՆԵՐՈՒ ՑԱՆԿԸ

42.— Պչուկի տնէն, որ կը բաղկա- նար 30 հոգիէ, ազատուած են Մալ- խաս իր երկու գաւաղներ, և Մուրա- տի տղան Ռուբէն:

43.— Չուլիի Սիմոյ տնէն, 12է, ազատուած Սիմոյ կին և անոր երկու զաւակները:

44.— Կէտի տնէն, 24է, ազատուած է միայն Պողոսի աղջիկ Հայկանոյ:

45.— Արաբոյ տնէն, 18է, ազա- տուած են վահան և իր եղբայրը Սա- թո, Մկրտչի տղան Մամիկոն և անոր եղբայր:

46.— Աուժի տնէն, 12է, ազա- տուած են Թուան, իր եղբոր կին, Դանիէլի տղան Ռուբէն և Մկրտչի:

47.— Ամուտ տնէն, 40է, ազատուած են Թուրք, Նիկ, Կակոսի փոքր տղան և աղջիկը և Պողոսի տղայ:

48.— Կրկայ տնէն 35է, ազատուած են Սեդրի տղայ, Թուանի կին աղջի- կը Եզի, Արաբոյի կին Արուտ:

49.— Արմէ տնէն, 17է, ազատուած են Երոյ տղայ Հայր, Կարոյ տղայ Գե- դամ և իր երկու եղբայրները:

50.— Պոտյ տնէն, 10է, ազա- տուած Գապարի կին Վերթին և իր երեք զաւակները:

51.— Հագրոյ տնէն, 30է, ազա- տուած Հագրկայ կին կինոն և տղայ Վազար, Նասան և իր կին:

52.— Կաթոյ տնէն, 15է, ազա- տուած են Արդին, իր կին իր տղան:

53.— Պղտէ տնէն, 25է, ազա- տուած են Մխիկ, իր տղաք Գարամ, Ռուբէն և իր կինը:

54.— Աջէ տնէն, 18է, ազատուած է միայն Հասարթի տղան:

55.— Արլէ Պետրոսի տնէն, 5է, ազատուած է միայն Պետրոսի կին:

56.— Մխկոյ Սըլոյ տնէն, 15է, ազատուած են Սլոյ տղայ Արսոն և Պարոյ տղան:

57.— Բըլոյ Աւարտու տնէն, 15 է, ազատուած են հարս Երանուհին և իր տղան Մուշեղ:

58.— Նոսնի տնէն, 17է, ազատ- ուած է միայն Տոնոյ տղայ Անդրանիկ:

59.— Մընոյ տնէն, 9է, ազատուած է միայն Դանիէլի կին Ապուրազմ:

60.— Թաթոյ տնէն, 40է, ազատ- ուած են Արոյ տղայ և Պողոսի աղջիկ Էտո:

61.— Շանոյ տնէն, 25է, ազատ- ուած են Պետրոսի տղայ Գեղամ, Աւե- տիսի կին Անդին և իր աղջիկ:

62.— Սընոյ տնէն, 20է, ազատ- ուած է միայն Մկրտչի կին Ասոն:

63.— Գուգուրի տնէն, 17է, ազա- տուած է միայն Կարոն:

64.— Կուկուրի տնէն, 14է, ազատ- ուած են Գրիգոր, եղբայրը և կինը Ստամօ:

65.— Ծոնոյ տնէն, 60է, ազատ- ուած են միասկի տղան Գարամ, ներ- սէ տղան մոսո, Թուոյ տղաք Ռուբէն և Մխթոն, Մըլոյ աղջիկ, Գէորգի հարս Իսկուն և իր աղջիկն ու տղան Թո- ըոս:

66.— Աւարտու տնէն, 15է, ազատ- ուած է միայն Մկրտչի աղջիկ:

67.— Կաշոյ տնէն, 17է, ազատ- ուած է միայն Մարգարի տղան Եր- ուանդ:

68.— Փանոսի տնէն, 15է, ազատ- ուած են Պետրոսի տղայ Սաղիկ և աղ- չիկ:

69.— Նըլոյ երիցու տնէն, 15է, ազատուած է միայն Մարգար տղայ Անուշ:

### ՃՇԻՆ ԿԱՍ ԳԻՐԳԻ . . .

Երեկոյեան մեր պաշտօնակիցը մեր հասցէին նախատական տողեր ուղղած էր, անշուշտ թերթ հրատարակած ըլլալու հաշիւը ստուգելու համար, ուրով մեր արհամարհանքին իսկ ար- ժանանալու պատիւն չեն կրնար ու- նենալ:

Այդ տողերը կ'ընդունեն իր իսկա- կան արժանիքը: Թերթ մը՝ որ պատասխանատու խմբագիր մը չունի, թերթ մը՝ որու յողուածագրերը, իրենց թափթիփոք- ներուն տակ իրենց ստորագրութիւնը զննելու քաջութիւնն իսկ չունին, կու- նենայ պարզամտութիւնն իր սրտին սեւութիւնը ցուցադրելու, և նախան- ձի նոպաներէն բռնուած պահ մը կը մոռնայ թէ՛ իր 68 թիւերով գեռ իր գոյնը ու գիրքը չէ յաջողած ճշգիւլ և անսարմ իր ընդթին կ'ընտայ ա- քոցիներ տրամկել . . . օգին մէջ:

Արգահատանքի արժանի չէ՞ . . .

### ՆՈՒԱԳԱՆԱՆԳԻՍ ՔԻՇԱԷՐ ԲԵՆԱՍԻ ՄԱՅ ՍՐԷԱՄԻ

Պ. ՅԵՆՐԻԿ Ա.ՂԱԶԱՐԵԱՆԷԸ  
Օժանդակ յեամք  
Տիպէն ԷՆԸԷ ԿԱԼԱՆՈՅԻ  
Հովանաւորութեամբ  
ԳՆՔ. Ց. ՅԱՂԱՅՆ Ծ. ՎՔԳ.Ի  
Նիճզարթի, 11 Սեպտ. 1919  
Գին ՏՈՄՍԱԿԻ 1 ՈՍԿԻ

### Տեղական Լուրեր

ԲԻՐԷԱԷՆ կը տեղեկացնեն թէ, Թե- նէտոս կողմին հարաւային-արեւելա- կողմը նշմարուած են նաև ռեբրկոր- ներու Բաւական հեռաւոր կէտի մը վը- րայ տեսնուած է նոյնպէս նաևուս կայ- մին գագաթը:

ԹԱՂԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ կը ծանուցա- նէ հետեւեալը.— Յարթ թոյլատրուած էր գառներու և այծերու մորթոտու- մը: Թառաղկայ ուրբաթ, Սեպտ. 5 է սկսեալ այս թոյլատրութիւնը վերջա- ցած է և խտորէն արգելուած:

ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ Այսուհի և Պալքէտերի պաշտօնատարներուն վերջին դէպքերէն առաջ վճարած էր, գալիք երկու ամսաթոշակները Պոլ- սէն հասած հեռագիր մը կը տեղեկաց- նէ թէ, այդ ամսաթոշակները ետ չպի- տի պահանջուին պաշտօնատարներէն:

ԱՍՏԵՐԻԿԱԿԱՆ թիւ 125 թորփիլա- նաւը, առջի օր Իզմիրի նաւահանգա- տին մէջ խարխիս նետած է:

ԾՈՒՎԱԹԻՆ թոյլատրուող հազոր- գակցութիւնները Իզմիրի, Պոլսոյ և Իրէքի միջև, ասկէ յետոյ պիտի կա- տարուին պետութեան հաշոյն աչ- խատող նաւերու միջոցաւ: Նոյնպէս յարակից միջոցներ ձեռք առնուած են բարեօրէնու հասմալ թոյլատրա- կան սպասարկութիւնը:

ԵՐԷԿ ԿԷՍՕՐՈՒԱՆ մոտ, Հասան Շիւ- սէյին անուն թուրք մը յարձակած է Ապուրու Համազ անուն թուրքի մը վրայ և զայն դանակով մը վիրաւորած է ուսին կողմէ: Ոճրագործը փախուստ տուած է:

ԺՕՐԺ ԿԻՔԻ անուն երիտասարդ մը վեցհարուածեանի մը հետ խաղացած միջոցին զէնքը կրակ առնելով կը վի- րաւորուի ծանրապէս որովայնին ներ- քեւէն: Վիրաւորեալին վիճակը շատ յուսահատական է:

ՉՈՒՔՈՒՐ ԶԵՇՄԷԻ ոստիկանատան առջև, առջի օր վէճի մը հետևանքով երկու թուրքեր կուրի կը բռնուին: Անորմէ մին՝ Ալի, դանակով մը կը վիրաւորէ կուրծքէն իր ախոյեանը: Ոճրագործը ձեռքաւարուած է: Վիրա-ւորեալը փոխադրուած է տանկական հիւանդանոցը: Վերջը շատ խորունկ ըլլալով քիչ յոյս ունին անոր փրկու- թեան վրայ:

ՀԱՆՐԱՅԻՆ առողջապահութեան անօրէնութիւնը կը ծանուցանէ:— Վերջին 24 ժամուան ընթացքին պա- տահած է Իզմիրի մէջ ծաղիկի 1 զէպը:

ՆՆԼԷՆ կատարութիւնը որո-ւ շած էր որ, Իզմիրի մէջ բանալ Ոստի- կանական վարժարան մը, որու ստե- րիկութիւնը պիտի յանձնուէր Պ. Մի- նոս Միւնթաղանիսի Այդ որոշումը ըս- հաւած է զործարարուիլ եւ այդ վարժա- րանին առաջին դասերը սկսած են երկու օրէ ի վեր: Անոնք որ կ'ուզեն մասնակցել այդ գասարտութեանց պարտին խնդրագրով մը դիմել վար- ժարանին վարչութեան:

ԻԶՄԻՐԻ հրապարակը առջի օր հասած են 120 բեռ թուղ, և ծախուած քանութարը 40 զրէր:

ՆԱՄԱԿ ԿԱՅ նազարէթ Երկանուս հասցէին, գալ ստանալ խմբագրու- թեանէս:

### ԿԸՓՆՏՈՒԻ

Կեսաբիոյ Թալաս գիւղէն Բարսիկ Մորեան, պատերազմին սկիզբը զին-ւոր գացած է Իզմիրէն Տէր-Չորի ուղ- ղութեամբ:

— Բնիկ Պոլսեցի Արամ Քրիսեան Իզմիրէ Պոլսի անկէալ Շամ զինուոր գացած. չորս ու կէս տարի է ի վեր երբէք լուր չէ առնուած: Կը խնդ-րուի իմացնել խմբագրութեանս:

— Մանիսացի Ղուկաս Կուրունեան, պատերազմին սկիզբը Պէյրութ զինուոր գացած էր. 4 տարիէ լուր չկայ: — Բնիկ Ուրֆացի, Սովսէպ Թա- կրեան Բարիզ գացած էր բժշկութիւն սորվելու համար (կը խնդրուի արտա- սահմանի հայ թերթերէն արտատպել զայս):



Ազգային Անցուդարձ

Երէկ երեկոյ Գաւառ ժողովը նիստ կազմեց 21 երեսփոխաններու ներկայութեան:

Ստեփանիստ Պ. Ն. Ներսէսեան հրաժարած ըլլալով երկացոյն անկամը Պ. Ս. Եփրեմ հրաւիրուեցաւ ատենապետութեան անդամ:

Կարգացուեցաւ հրաժարեալ ատենապետին հրաժարագիրը և թեր ուղեմ կարծիքներէ յետոյ որոշուեցաւ մեծամասնութեամբ մերժել զայն և բացատրութիւն խնդրել անոր հրաժարագրին պատճառարանութեանց համար:

Ժողովի գումարուելէն պահ մը առաջ հասած ըլլալով Պօղոս Նուպարէ կողմը կարգացուեցաւ որ հետեւեալն է:

Զմիւռնիոյ Առաջնորդական Փոխանորդ Հօր, Ի Զմիւռնիա

Արժանապատիւ Հայր,

Այս միևնոյն թղթատարով կը շըրկենք Ձեզ այն կողմը զոր Ազգ. Պատուիրակութիւնս կ'ուզէ բովանդակ հայութեան:

Ի նկատի ունենալով ժամանակին կարեւորութիւնը և լպէտքերուն մեծութիւնը, կը խնդրենք որ հաճիք հարկ եղած բոլոր միջոցները գործարհել, Ձեր կեդրոնին հայութեան թիւին և նիւթական կարողութեան համաձայն, Ազգ. հանգանակութիւնը այդ տեղ ևս ամենամեծ ջարդով արգիւնաւոր ընծայելու համար: Ի միջի այլոց Պատուիրակութիւնս կը խնդրէ որ հաճիք անմիջապէս արտասովոր գումարման մը հրաւիրել տեղեւոյց ամէնէն գործուն, ազդեցիկ և ունեւոր սոցալայինները և մղէք զանոնք որ իրենց նիւթական ու բայտական սակացութիւնը անվերապահ կերպով տրամադրեն այս գործին իրենցմէ նիւթապէս կարողացոյնները իրենք իսկ տալով մեծաքանակ նուիրատուութեանց օրինակը, ինչպէս արդէն փորձել մէջ կատարուեցաւ այս օրերու, ազգասէր և ունեւոր հայրենակիցներու կողմէ:

Հանգանակութիւնը լուրջ արգիւնքի մը յանգեցնելու համար ուրիշ անհրաժեշտ միջոցներու ընտրութիւնն ու գործարհութիւնը յանձնելով Ձեր իմաստութեան կը խնդրենք անգամ մը ևս որ բարեհաճիք իսկոյն գործի ձեռնարկել և զոյացած արգիւնքը մաս առ մաս յղել Պատուիրակութեանս, առանց սպասելու Հանգանակութեան փակումին:

Կը մնամ որդիական անկեղծ յարգանքով:

Ներսէսէ Հոյ Ազգ. Պատուիրակութիւն ՊՅՂՈՍ ՆՈՒՊԱՐ

Յ. Գ. — Այժմէն կը յայտնենք թէ հանրաձայնօթ հայ արուեստագէտ Պ. Էսկառ Շահին, Պատուիրակութեան խնդրանքին վրայ ինքն իսկ պատկերագրագած է այն գեղարուեստական նուիրատուները որոնք պիտի զրկուին որոշ գումարէ մը աւելին վճարումով այս նոր Ազգ. Հանգանակութեան մասնակցողներուն նուիրատուին ստացման իրաւունք տուող նուագագոյն գումարին սահմանումը կը թողունք իւրաքանչիւր կեդրոնի պատասխանատու մարմնոյն, որ առ այդ նկատի պէտք է առնել անկական պայմանները նուիրատուին վրայ արձանագրուած պիտի ըլլան նուիրատուին անունն ու իր նուիրարեւած գումարը:

Ժողովը կարգացուեցաւ և ֆուլք ժողովոյ տեղեկագիրը նախորդ հանգանակութեան վրայ, և ինչպէս Պօղոս Նուպարի նոր կողմին, նաև այս տեղեկագրին վրայ խօսեցան երեսփոխաններէն Պ. Ս. Դաւիթեան, Մ. Սարգիսեան, Կ. Պալպանեան, Թ. Պոյաճեան և ուրիշներ և որոշուեցաւ նախորդ հանգանակութեան գումարը, որմէ 60-65 հազար ոսկի զրկուածէն զատ Պօլոյ խնամատարութեան, մնացեալ

70 հազարի մօտ գումարն տեղական պէտքերու, այսինքն որբերու և տարագիրներու համար գործածել, նմանապէս որոշուեցաւ լիազօր արտօնութիւն տալ Տեղապահ հօր և Ազգ. վարչութեան որպէսզի իրենց յարմար գատած եղանակով կարգեն նոր հանգանակիչ մարմին մը գոհացում տալու համար Պօղոս Նուպարի կողմին:

Ապա կարգացուեցաւ Ազգ. Ընդհ. Միութեան կարգութեան անթիւ Գաւառ. Ժողովոյ կողմէ ընտրուած մասնակցողներն համարատուութիւնն, որով կ'իմաստուէր թէ՛ Տեղապահ հօր Իզմիր զարտեմար համերաշխութիւն մը գոյացած է ընդմէջ Հ. Յ. Դ. տեղական մարմնոյն և հայկական միութեան յետաձգելու այդ միութեան կազմութիւնը, անոնց արտօնարտած փափաքներուն գոհացում տալու համար լիուրի բաւարար համարելով Ազգ. սահմանադրութիւնն Այս մասին ժողովը աւելի լուսարանուելու համար խնդրեց Տեղապահ հօրմէ բացատրութիւններ տալ և լսեց նորին Սրբութեան ծրագրեր-բացատրութիւններն, որոնք հաստատեց նաև Պ. Պոյաճեան Հայկական Միութեան կողմէ և ժողովը իր գոհունակութիւնն յայտնեց, որ այս խնդիրն եւս համերաշխութեամբ, առանց քաջալուքներ պատճառելու կարգադրութեան մը յանգած է:

Օրակարգի խնդիրներուն մէջ կը գտնուէր նաև պիւտոմէի խնդիրը, այս մասին եւս ժողովոյ ատենապետն սկսաւ վարչութեան պատասխան պիւտոմէն յօդուած առ յօդուած կարգաւ, սակայն ժամանակն ուշ ըլլալով և երեւոյթներէ ումանք գիւղերն միևնիւր պարտաւորուած ըլլալով, միաձայնութեամբ որոշուեցաւ յատուցելու որքաք երեկոյ կրկին նիստ գումարել և քննել ու վերջնականապէս վաւերացնել նաև այդ պիւտոմէն:

Օրակարգի խնդրոյ մէջ կ'գտնուէր նաև Բազաք. Ժողովոյ երկու անդամներու ընտրութեան խնդիրը որ բնականաբար յետաձգուեցաւ յաջորդ նիստի:

Տեղոյս անձկութեան պատճառաւ միմիայն կարևոր գիծերը ուրուագրել յարմար դասեցինք առանց մանրամասնութեանց մէջ մտնելու:

Գաւառ. ժողովը իր նիստերուն պահուն գծադրագրարը շղթայի իր բարձրութեան վրայ մնալ և երբեք իր սահմանէն ելնելով պարզապէս հաւաքովի մը ձև կ'ստանայ, այս դիտողութիւնն պարտ կ'համարենք ընել, հանդիսակցներու առջև դէմ ծիծաղելի չգրառնալու համար:

Պիտի փափաքէինք որ նախորդ Ատենապետ Պ. Ներսէսեան հարկ եղած բացատրութիւններն տալով և ստանալով հոտ առնէր իր հրաժարականն և գար իր աթոռը գրաւելու, հակառակ պարագային ժողովը հարկ է որ զինք վարելու համար ատենապետութենէ հասկցող ու զայն յաջողապէս վարելու կարող երեսփոխան մը ընտրէր յաթոռ ատենապետութեան:

— Պատկէն հրատարակուող դաշնակցութեան օ կան «Հայրենիք» ի Յունիս 8 ի թիւին մէջ կը կարգանք. — Գնդապետ Ուրիլըմ Հասթէլ այսօր վերին գործակատար նշանակուեցաւ Հայաստանի համար, Չորս մեծ պետութիւններու, Ֆրանսայի, Անգլիոյ, Միացեալ Նահանգներու և Իտալիոյ կողմէ: Գնդապետ Հասթէլ պիտի վարէ ամբողջ երկրին անտեսական խնդիրները, ստեն իրաւասութիւններով և տեղեկագիր պիտի տայ Փարիզի խորհուրդին: Բոլոր նպաստի կարգապետութիւնները Պօլոյ, Վրաստանի և Տաճկաստանի նահանգներու մէջ, տեղեկագիր պիտի տան իրեն:

Գնդապետ Հասթէլ վերջերս վերագրածու Ռուսաստանի, ուր գացած էր նպաստի բաշխման որքը գլխարկու համար:

ՎԵՐՋԻՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

4. Պօլիս 4 Սեպտեմբեր 1919

ԱՄԵՐԻԿԱ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆ

Ուշիկիթընէ կը հեռագրեն թէ Ամերիկա կ'իտրի զրկել 150,000 զօրք Հայաստանի մէջ կարգը պահելու համար: Ամերիկեան խորհրդարանը պիտի որոշէ թէ Մ. Նահանգաց կողմէ այս միջամտութեան պատճառաւ, պէտք է պատերազմ յայտարարել Թուրքիոյ Ամերիկայի արտաքին գործոց նախարարութիւնը կը ծանուցանէ թէ՛ ծովակալ Պրիսթօլի կողմէ Թուրքիոյ տրուած վերջնագրին պատասխանատուութիւնը ինք՝ նախարարութիւնը վրան կ'առնէ:

ԳՆԴ. ՀԵՍՏԷԼ Ի ԵՐԵՒԱՆ

Ամերիկեան նպաստամատոյցի հասած հեռագիր մը կ'տեղեկացնէ թէ գնդ. Հեսթէլ երեւան հասած է:

ԱՄԵՐԻԿԱ ԵՒ ԱՆՈՐ ՅԱՆՁՆԱՌՈՒԹԻՒՆՔ

Ուշիկիթընէ ուրիշ հեռագիր մը կ'ըսէ թէ Թուրքիոյ զրկուած ամերիկեան քննիչ յանձնախումբը պիտի պահանջէ որ Ամերիկա ստանձնէ զսա զատ յանձնառութիւններ Սուրիոյ, Միջագետքի և Եւրոպական Թուրքիոյ մասին Այս յանձնախումբին յանձնարարութեանց համաձայն՝ Ամերիկա այս մանտանները ստանձնելով, պէտք չէ զօրք զրկէ, այլ տեղւոյն վրայ բնիկներէ ոստիկանութիւններ չ'կազմակերպէ:

ԾՈՎ. ՊՐԻՍՏՈՒ ԲԱՐՁՐ ՔՕՄԻՍԷՐ

Ուշիկիթընէ կը հաստատուի որ ծով. Պրիսթօլ անուանուած է Մ. Նահանգաց բարձր քօմիսէր Կ. Պօլսոյ մէջ: Այս իրողութիւնները տպաւորութիւն կործամ է Բարիզի մէջ, ուր կ'կարծուի թէ՛ այս անուանումը ցոյց կուտայ Ամերիկայի որոշումը Թուրքիոյ գործերուն միջամտելու:

ՄՐ. ԲՈԼՔ Կ'ԱՐՏԱՅԱՅՏՈՒԻ

Մր. Բոլք բացատրած է Մ. Բլէմանսօի թէ նախագահ Ուիլսոնի սպառնալիքը Թուրքիոյ դէմ տեղի ունեցած է, գոհացում տալու համար Ամերիկայի հասարակաց կարծիքին:

ՏՔԹ. ՔՐԱՆ ԵՒ ԹՈՒՐԿԻԱ

Ամերիկեան քննիչ յանձնաժողովոյ նախագահը, ի մէջ այլոց յայտարարած է հաշտութեան յանձնաժողովին որ Ամերիկա պէտք է ստանձնէ Թուրքիոյ յանձնառութիւնը:

ԱՄԵՐԻԿԱ ԵՒ ԹՈՒՐԿ ՄԱՄՈՒԼԸ

Ամերիկեան թերթերն «Նիւ Եօրք Հէյըլտ» և «Շիգակօ Թրիպլին» Թուրքիոյ մասին յօդուածներ կը գրեն:

ԲՈԼՇՆԻՍ ԵՒ ԶՈՒՅՑԵՐԻՍ

Առեւտրական համաձայնութիւն մը կ'ընկած է ընդմէջ Բոլշևիոյ և Զուիցերիոյ:

ՊՈՒԼԿԱՐ ԴԱՇՆԱԳՐԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Բարձրագոյն Խորհուրդը զբաղեցաւ երէկ առաւօտ պուլկար դաշնագրին պայմաններով: Բայց Թրակիոյ խնդիրը եզրակացութեան մը չ'յանգեցաւ, ինչպէս նաև Եգիպտոսի վրայ Պուլկարիոյ բաց դուռ մը ունենալու խնդիրը:

ՄՐ. ԲԼԷՄԱՆՍՕ ԵՒ ԹՈՒՐԿԻԱ

Բարիզէ կը տեղեկացնեն թէ՛ Մ. Բլէմանսօ Թուրքիոյ ճակատագրին մասին հետեւեալը յայտարարած է:

«Օտմ. կայսրութեան վրայ տեղի ունեցող քննութիւններն մեզի պիտի յանգեցնեն Թուրքիոյ իրաւունքներն պահպանելու որոշման:

ԽՈՐՀՐԴԱԿՑՎԱՐԶԱՊԵՏՆԵՐՈՒ

Մ. Վէնիզէլոս յայտարարած է Մ. Բլէմանսօի որ Յունաստանի շահն կը պահանջէ որպէսզի Թրակիոյ և Փօքը-Ասիոյ խնդիրներն շուտով լուծուին: Մ. Բլէմանսօ պատասխանած է թէ այս խնդրոյն մասին եզրակացութեան մը գալու համար պէտք է որ դաշնակիցներն իրենց կարծիքն յայտնեն:

ԸՆԿՂՄԱՆ ՆԱԻԲԸ

«Տէլի Մէյ» կ'իմաստացանէ որ ընկղմուած նաւերու ազատման համար աշխատող ընդժողկաններն յաջողած են ցարգ մէկ միլիոնի արժէքով նաւեր ազատել:

ԳԵՐՄԱՆՆԵՐԸ ԱՆՈՒՂՂԱՅ

Թերթերու հաղորդած տեղեկութեանց վրայ՝ Համաձայնականներու յանձնուելիք 12 ցէֆլինները փճացուած են գերման ծովային սպաններու հրամանաւ:

ԳԵՐԻՆԵՐՈՒ ԱԶԱՏԱԳՐՈՒՄ

Անգլիոյ մէջ գերի պահուած Գերմաններու ազատագրումը սկսած է:

ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ Կ'ՀՏԱՏԱՏՈՒՆ

«Նիւ Եօրք Հէյըլտ» կը հեռագրէ որ բրիտանական կառավարութիւնը տրամադիր է Պերլին զրկելու դեսպան մը և գործակատար մը անմիջապէս որ երեք մեծ պետութիւններն պիտի վաւերացնեն հաշտութեան դաշնագիրը: Այս մեծ պէտքը տեղեկացնելով թերթը կ'ստեղծէ թէ Ֆրանսա եւս նոյնը ընելու տրամադիր է:

ՍԵՐՊԻՌՅ ԱՄԵՐԻԿԵԱՆ ԶՕՐՔԸ

Ամերիկա որոշած է Սերպիոյ մէջ գտնուած ամերիկեան զինուորները հոտ կաշելու:

ԶԱՄԻՉԻ ՄՈՒՏՔՆ ՅԱՆԳԼԻՍ

Ստացուած տեղեկութեանց համաձայն Անգլիա պիտի թոյլագրէ չափիչ մուտքն իր հողին մէջ:



ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆԻՔ  
ՍՏԵՓԱՆ ԻՓԼԻՔՅԵԱՆ

Ա. Յ. Ե. ՈՐ. Կ. Բ. Պ. Գ. Ս.

ԱՆԿԼԻԱԿԱՆ ԵՒ ԳԱՂԻՍԿԱՆ ԱՌԱՋՆԱԿԱԿՐ ԳՈՐԾԱՐՅԱՆՆԵՐՈՒ

ՊԵՐՊՈՍՏՆԵՐՈՒ ԵՒ Փ. Ս. ՄԱՆՈՒՄ

Մեր... զէնկային. — Գրէր ար Շին. — Շարմէղ. — Կրրնատիէ. — Թափթայ. — Գէնկային. — Ֆայ. — Էօլիէն. — Գրէր ժօրժէթ. — Վլրուտ տի Նօս եւն:

Բըրեղէն. — Կապարտին. — Գօթինի. — Ալեր. — Տիակօնալ. — Շէվիթ. — Քալմիր. — Մուսլին. — Էթամին. — Վիլյէլլա եւն:

Չանգան. — Թիւլ Մուսթիթի. — Տանթէլ Վալանթիէն. — Բուրդէ և բամպակէ զուլպաներու ճոխ մթերք:

Ճերմիլէն. — Մասթուրամ, Տրա ար լի և Գրուաղէ Horro-kes' առջնու կարգ գործատան:

Ան-Չանգան. — Ակապի բաթ և շուր. — Kalynos և Cherry Blossom բուստաներու Pears և Velvet օճաններ:

ԱՌԻԹԷՆ ՕԳՏՈՒԵՑԷՔ  
ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆ

ՏՊԱՐԱՆ ԱՐԱՄԻՐԵԱՆ  
ԷԲՄՆՈՒԿ 1888ԿՆ

ՏՊԱՐԱՆԻՍ մէջ կը տպագրուին զրբեր, զրբոյներ, տետրակներ, յայտարարու-  
թիւններ, հարսանեկան հրատարակումներ, զեկուցատուներ ու մանագրներ եւն:  
ՏՊԱՐԱՆԻՍ մէջ կը տպուին նամակագրութիւններ, պատճառներ, հաշուեցուցակ-  
ներ, ընկալագրեր, վերլուծական վաճառատան մը վեկարբերակ ամեն տեսակ  
տպագրական գործեր:  
ՏՊԱՐԱՆԻՍ մէջ կը տպուին տեղեկագրութիւններ, երեկոյններու նամակ-հրատարար-  
գրեր տոմակներ եւ վերլուծական տպագրական արհեստին վերաբերեալ ամեն  
տեսակ գործեր:

Ամեն լեզուէ՝ ՉԱՅԵՐԷՆ, ՖՐԱՆՍԵՐԷՆ, ԱՆԳԼԻԵՐԷՆ, ՅՈՒՆԱՐԷՆ, ԹՈՒՐԵՐԷՆ  
**ՏԵՍԱԿԵՐՈՒ ՊԵՏՎՈՒՄՈՒԹԻՒՆ**  
ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԳՈՐԾԵՐՈՒ  
Մախուր և խնամեալ գործ օրուան զինքու զրայ  
Տպարանս բաց է առաւօտէ մինջեր կես գիշեր  
խնդրակներու համար  
**ՎՃԱՐՄՈՒՆՔ ԿԱՆԽԻԿ**

**ROYAL EXCHANGE ASSURANCE**  
ՀՐԻԵՅԻ ԱՊԱՅՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ  
Ընկ. Գ. Ռոյալ-է-Յ  
C. WHITTALL et Co.  
Շ. ՈՒԻԹՅՈՒ և Ընկ.

ԱՊԱՅՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

Կրակի դիմ.  
NATIONAL UNION SOCIETY LTD.  
LONDON

CENTRAL INSURANCE CO. LTD.  
LONDON

Ծովային.  
PHOENIX ASSURANCE COMPANY LTD.  
LIVERPOOL

Դիմելը մանրամասնութեանց համար.  
ԸՆԿ. ԳՈՐԾԱՐՅԱՆ ԳՈՐԾԱՐՅԱՆ  
Լ. ԵՒ Լ. ՎԱՐՊԵՏԵԱՆ

COMERCIAL UNION ASSURANCE LTD.  
FIRE & LIFE  
ՄԵԾ ԱՊԱՅՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ.

ՍՏՈՐԱԳՐՈՒԿԱԾ ԴՐԱՄԱԳԼՈՒԽ L.S. 2.500.000  
ՏՐԱՄԱԴՐԵԼԻ » » » 2.250.000  
ԱՆԳԼԱԿԱՆ ՈՍԿԻՈՎ ՎՃԱՐԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՍԻ  
Կապանոյագրէ ամեն ճեալայ ապրաւ և կաշուած  
Ընդհանուր գործակալ  
ՍՊԱՐԹԱԸ ԵՂՖԱՐԲ  
ՆԱԲԵՐԵՔ ԳԱՌՈՒ

ԹԵՆՏՈՐՈՍ ԲԱՄԽՆՈՒՏ՝ Ս  
ՋՐԱՔՈՒԹԱԿ ԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ  
ԵՒ ԲԱՂՆԻՔՆԵՐ

Ջրաքուժութիւնը մօրթը կը մաք-  
րէ, առ տաշնչութիւնը կ'ը դիւրացնէ  
արեան շրջանը կը փութացնէ և մարմ-  
նոյն անդամալոյծ մասերուն նոյժ և  
առողջութիւնը կը պարզուէ:  
Հողանք ճծմբային } րիւմաթիւմի հոյր.  
» պարէզ }  
տուր ու պողտուշը կ'իյննորու և այրերու  
համար առողջութիւն է:  
Բէշիտիէ ճտոէտի նոր փառան դիմ  
Ֆրնալը փողոց թիւ 18-32:  
Հազար ֆրանք տուած զուտ ապտրատ  
է, եթէ հաստատել յաջողի թէ վնաս-  
տակար է առողջութեան համար  
տուշը:

ԴՊՐՈՑԱԿԱՆ նոր-տարեշրջանի  
առթիւ, հայերէն և ֆրանսերէն ա-  
մէն տեսակ գրաստգրքեր գնելու հա-  
մար դիմել՝ ԳԱՌՆԻԿ Ա. ԲԱՐՈՒՆԱԿ-  
ԵԱՆԻ, (51-Մէրկո ճաստի, Գեթգերթ)  
Յանձնարարութիւնները կը կա-  
տարուին փութով և ճշտապահու-  
թեամբ:  
Յանձնարարութեանց փոխարժէքը  
կանխիկ է:  
Նոյն հասցէին պէտք է դիմել նաև՝  
ունենալու համար հանրամատոթ եր-  
գահան-գաշնակահար Պ. Յ. Սիման-  
եսի բոլոր երածտական հրատա-  
րակութիւնները, մասնաւորապէս նոր  
հրատարակած Բալ Փորոտան ու Հա-  
յաստանը:  
Հատին գինն է 25 դրշ:

ՏՊ. Յ. ԲԱՐՈՒՆԱԿ  
ՄԱՍՆԱԳԷՏ  
ՆԱԲԵՐԵՔ, ԱՌԱՋՆԱԿ ԵՒ ՏՊԱՐԱՆ  
Հիւանդ կ'ընդունի բացի կեղծիւթ  
ամեն օրու Առաւօտ ժամը 10-  
12ին և կ' Էտը 3-5:  
ՊԱՇՏՈՆԱՏԵՂԻՆ. — Հայոց բաղ Մօսաւ  
փողոց թիւ 82:

ՄԱՍՈՒԼԻ ՏԱԿ Է  
ՇՈՒՏՈՎ 11080 ԿԸ ՏԵՍՆԷ  
**ՎԱՐԴԳԷՍԻ**  
«ՄՏԻՔԵՐ ՈՒ ՊԱՏԱԿԵՐՆԵՐ»  
Պ Բ Ք Ո Յ Ն Ը  
ԳԻՆ 15 ՂՐՇ.

ԼՈՒԻ ՊԱՐԹՈՒԻ ՏԵՂԵԿԱԳԻՐԸ  
ԳԵՐՄԱՆ ՀԱՇՏՈՒԹԵԱՆ ԴԱՇՆՎՐԻՆ

ՌԷՆԻ ԵՋԵՐՔՆԵՐՈՒՆ ԱՊԱՋԻՆՈՒՄԸ  
ՁԱԽ ԵՋԵՐՔԻՆ ԳՐԱՌՈՒՄԸ

Ռէնի եղերքներուն վերաբերեալ  
զաշնագրին տրամադրութիւնները տե-  
ւական կամ ժամանակաւոր են 42 և  
43րդ յօդուածներու վերջը Գերմանիոյ  
համար արգելուած է ամբողջութեամբ  
պահել կամ շինել Ռէնի թէ՛ ձախ ե-  
զերքին և թէ՛ աշակողման եղերքին  
վրայ գետին արեւելակողմը մինչև 50  
քիլօմէթր հեռաւորութեան վրայ Այս  
շրջանակին վրայ արգելուած է նաև  
զինեալ ուժերու պահպանուած կամ  
հաւաքուած տեսական կամ ժամանա-  
կաւոր պայմաններով, ինչպէս նաև որ  
և է բնոյթ ունեցող զինուորական շար-  
ժում, կամ գործողութի գրութիւն  
ընծայող նիւթական միջոցներ:  
44րդ յօդուածին վերջը, եթէ Գեր-  
մանիա որ և է կերպով հակառակ  
վարուի այս տրամադրութիւններուն,  
իր այս ընթացքը պիտի նկատուի եր-  
թնամական արարք զաշնագրեր ստ-  
րագրող պետութիւններուն զէմ և իր  
շարժանիթ աշխարհի խաղաղութեան  
միջոցով:

Թիւնը աստիճանաբար Ռէնի ձա-  
խակողման եղերքին վրայ ձեռք  
առնուելիք միջոցները նշանակուած  
են 428 և 433րդ յօդուածներուն մէջ:  
Ռէնի արեւմտեան կողմը գտնուող  
գերման հողամասերը 15 տարուան  
միջոցով պիտի զբաւուին զինակից  
և շահակից տէրութեանց զօրագուն-  
ներով: Կամրջազուտներու և անոնց  
յարակից հողամասերուն հետզհետէ  
պարպուելը՝ նախատեսուած է այն  
պարագային համար որ Գերմանիա  
հաւատարմօրէն պիտի գործադրէ  
Դաշնագրին պայմանները: Գոյնիոյ  
կամրջազուտին պարպուելը՝ 5 տարի  
վերջը, Կօպէնցի կամրջազուտին՝ 10  
տարիէն, Բէլի և Մայանսիւնը՝ 15  
տարիէն:  
Գրուածն ամենէ երկարածիկ շըր-  
ջանը՝ ամենէ նուազագոյնը չէ՛ որմէ  
վար կարելի չլլայ իջնել: Արդարև  
զաշնագրերը կ'որոշէ գորագուններուն  
անմիջապէս ետ քաշուելը, եթէ Գեր-  
մանիա 15 տարուան պայմանաժամը  
չ'լրացո՞ծ, զաշնագրին իրեն պարտա-  
ղած պարտականութիւնները կատա-  
րէ: Բայց այս միևնույն ժամանակամի-  
ջոցը նուազագոյնը չէ՛ որմէ աւելի  
անդին կարելի չլլայ անցնել: Չինա-  
կից և զաշնակից տէրութիւնները  
պիտի կրնան արգարև, 35 տարի  
վերջը, զբաւուծել երկարածիկ իրենց

մանիոյ կողմէ անակնկալ յարձակման  
մը գէմ արուած երաշխաւորութիւն-  
ները անբաւական նկատուելի վերջա-  
պէս, զբաւման միջոցին, կամ նոյն  
խոյ 15 տարի վերջը, լքուած գօտինե-  
րը պիտի կրնան վերստին և անմի-  
ջապէս զբաւուիլ, եթէ հատուցման  
յարձակողութեամբ տեսնէ թէ Գերմանիա  
ամբողջապէս կամ մասամբ կը մերժէ  
գործադրել այն խոստումները, որոնց  
պարտագրած է զինք Դաշնագրերը:  
Սոյն ժամանակաւոր կամ տեսական  
կարգադրութիւններուն ամբողջ իմաս-  
տը ըմբռնելու համար՝ պէտք է յիշել  
Նոյնիմը. 11րդ զինագրագրին պայման-  
ները:  
«Ն. — Ռէնի ձախակողման եղեր-  
քի երկիրներուն պարպուելը Գերման  
բանակներու կողմէ:  
« Ռէնի ձախ եղերքի երկիր-  
ները պիտի կառավարուին տեղական  
իշխանութեանց կողմէ՝ զաշնակիցնե-  
րու և Միացեալ-Նահանգաց զօրագու-  
ղերու հսկողութեան տակ:  
« Դաշնակիցներու և Միացեալ-  
Նահանգաց զօրագունները այդ երկիր-  
ներու գրաւումը պիտի սպասուին  
այն բերքերով, որ կը գտնուին Ռէ-  
նի անցքին զլիւսուոր կէտերուն վրայ  
(Մայանս, Գօպէնցի, Գօլնեքը.) ալ և  
զերքին վրայ գտնուած 30 քիլօմէթր  
տարածութեամբ կամրջազուտներով  
և ան ամբողջութեամբ օրոնք նմա-  
նապէս երկրին ռազմագիտական կէ-  
տերը կը կազմեն:  
« Ռէնի ալ եղերքին վրայ չէզոք  
գօտի մը պիտի սահմանուի՝ գետին և  
կամրջազուտներուն և գետերուն  
զուգահեռաբար նշանակուած սահմա-  
նապիւի մը մէջ տեղ, և 10 քիլօմէթր  
հեռաւորութեամբ՝ չօլանտայի սահմա-  
նապիւսին սկսեալ մինչև Զուլցերիոյ  
սահմանները:  
Չինագրագրէն մինչև Դաշնագրին  
ստորագրուելը՝ երաշխաւորութիւնն,  
ըլ մեծապէս բազմապատկուեցան Ա-  
սոնք բաւական են Ֆրանսան պաշա-  
պանելու համար գերման նախարար  
կուտի մը զէմ, որ զբաւումը չլլայ  
ու պարագային՝ շարժման մէջ պի-  
տի զնէ Մեծն-Բրիտանիոյ և Միաց.  
եալ-Նահանգաց զինուորական ուժերը:  
Չկայ հարց մը որ ասկէ աւելի զբա-  
ւած լլլայ յանձնաժողովոյս ուշադրու-  
թիւնը: Չկայ ուրիշ որ և է խնդիր որ  
այնքան խորապէս յուզած լլլայ իր  
խիղճը և որու լուծումը աւելի ծան-  
րօրէն ճնշած լլլայ իր պատասխա-  
նատուութեան վրայ: Ասիկայ ազգա-  
յին հարց մըն է, որ դարձե՛մ ի վեր  
վիճարանութեան նիւթ ընծայած է  
1814ի և 1815ի զաշնագրութիւննե-  
րուն հետեանքով՝ պատմագիրներու  
և պետական մարդոց, և խանդավա-  
նօրէն յուզուած՝ վերջին պատերազ  
մին ատենն:  
(Շար.)